

5(644)
21.02.2022

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊՐՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՁԵՎՈՎ

Երբ 2016 թվականի ապրիլյան պատերազմի ժամանակ Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարությունը սպառնացել է, որ հրթիռային հարված կհասցնի Ստեփանակերտին, Արցախից պատասխանը եղել է շատ կոշտ՝ «Թող փորձեն...»: Իսկ ահա 2020-ի աշնանային պատերազմի ժամանակ Ադրբեջանը դաժանորեն հրթիռակոծեց ու ռմբահարեց ոչ միայն Ստեփանակերտը, այլև արցախյան մյուս բնակավայրերը: Պատասխանը ԱԶ պաշտպանության բանակի կողմից համարժեք էր, թեպետ պատերազմի արդյունքը, ցավոք, մեզ համար աղետալի եղավ:

Գոյություն ունի ինքնապաշտպանության՝ միջազգայնորեն ամրագրված իրավունք, ըստ որի՝ պաշտպանվող կողմն իրավասու է իր ձեռքի տակ ունեցած զինական միջոցներով պատշաճ հակահարված տալ հակառակորդին: Այս համապատկերին Ադրբեջանի դատախազության հայտարարությունը, թե քրեական հետապնդում է նախաձեռնել Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի նկատմամբ և հայտարարել է հետախուզում, բնավ չի տեղավորվում միջազգային համընդունելի իրավունքի տրամաբանության մեջ: Այնուհանդերձ, որ այսօրինակ ձեռնարկման իրական նպատակը Արցախի Հանրապետությանն ու նրա բնակչությանն ահաբեկելն է, ինչը բնորոշ է Ադրբեջանի ղեկավարության գործելակերպին: Հարևան երկիրը հուսահատորեն փորձում է Արցախում և դրանից դուրս ազատ տեղաշարժվելու արցախցիների իրավունքը դարձնել վերահսկելի, ինչպես նաև իրավաքաղաքական գերակայություն ունենալ այս տարածքի վրա:

Ինչո՞ւ է դա արվում հիմա, այլ ոչ թե ավելի վաղ: Ուշագրավ է, որ Ադրբեջանական հերթական սադրանքն սկսեց զենեղացվել հենց այն պահին, երբ հայտնի դարձավ, որ Արցախի Հանրապետության խորհրդարանը շրջանառության մեջ է դրել «Բռնազավթած տարածքների մասին» օրինագիծը, ըստ որի՝ Ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետևանքով բռնազավթված տարածքների վրա սահմանվում է իրավական կարգավիճակ ու տարածվում է իրավական հատուկ ռեժիմ: Այս օրենքը Ադրբեջանի համար յուրօրինակ դանդաղ գործող ռուժը է, հատկապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության ակտիվացման հետևանքով: Մեծ համանախագահները մեկ անգամ չեն հայտարարել, որ դարաքաղյան հիմնախնդիրը դեռևս լուծված չէ և այն պետք է հանգուցալուծվի հայտնի երեք սկզբունքների հիման վրա: Այդ սկզբունքներից մեկն էլ ստույգ տարածքում բնակվող ժողովրդի ազատ կամարտահայտության իրավունքն է, իսկ փաստ է, որ Արցախի տարածքի տնտեսական իրավունքը շուրջ երկու տասնամյակ հանդիսացել է իբրև բանակցային քննարկումների հիմք: Բնականաբար, Ադրբեջանը կփորձի քրեական գործեր «թխելով»՝ միջազգային հանրությանը շեղել բուն խնդրից, իսկ Արցախի և Հայաստանի իշխանությունների խնդիրն է դիվանագիտական և լրբեհնգային խողովակներով տորպեդահարել Բաքվի ռազմաքաղաքական դեկավարության ապօրինի գործողությունները:

Շատ կարևոր է, որ ԱԶ նախագահին իրավական բռնության ենթարկելու ադրբեջանական նկրտումներին բացասական են արձագանքել Արցախի հասարակական-քաղաքական ուժերը՝ դատապարտելով ավիկյան կլանի գործողությունները: Սա նշանակում է, որ անկախ երկրի ներքին կյանքում ունեցած գաղափարական հայացքների տարբերությունից, միասնական ենք մեր պետականության դեմ ուղղված ցանկացած ոտնձգության պարագայում:

Եվ այդպես պիտի լինի միշտ, քանզի բոլոր հաղթանակները մենք կերտել ենք բացառապես ազգային միասնությամբ ու համախմբվածությամբ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՀԱՄԱԽՄԲԱՆ ՓԵՏՐՎԱՐԸ

Ամեն անգամ, երբ գալիս է փետրվարը, հոգումս տարօրինակ ալեկոծություն է սկսվում, տարօրինակ հուզում, որ կապված է մեր պատմության ըմբոստ ու հերոսական օրերի հետ, երբ մենք մեզ աշխարհի երջանիկն էինք համարում և մեր ըմբոստությամբ ու հանդգնությամբ հպարտ էինք, որ աշխարհի ուշադրության կենտրոնն էինք դարձել: Մեր արդարացի պահանջներն ուղղված էին աշխարհի անարդարությունների դեմ, անարդարություն, որի հետևանքով մենք դարձել էինք քաղցր պատառ շան բերանում: Ու անառարկելիորեն հավատում էինք, որ մեր պայքարի արդյունքում քնած խիղճերը կարթնանան ու կմտախոզվեն մեր ճակատագրով, որը միշտ էլ խեղճությունն է գերտերությունների կողմից: Մենք ընդամենը մի խաղաթուղթ էինք նրանց կեղտոտ խաղատեղանից, որի կորուստը ոչ մեկի համար գլխացավանք չէր կարող դառնալ: Բայց մենք միամտորեն հավատում էինք ու ակնկալում մեր հարցի դրական լուծումը:

Այն ահեղ օրերին ոչինչ չկտրեց մեր հավատը: Ոչ զրկարեքները, ոչ ցուրտը, ոչ մուռն ու ահազու գիշերները ի գորու չեղան սասանելու մեր հավատը, կամքը, որ ժայռից ավելի կարծր էր: Ոչ մի դժվարությունից չէինք ընկճվում ու խեղճանում: Հանրահավաքների ժամանակ էլ, որ տեղի էին ունենում Արցախի սրտում՝ Ստեփանակերտում, աջակցում էինք անվերապահորեն:

88-ի փետրվարյան բոլոր օրերը հավերժ մնալու են մեր պատմության ոսկե տառերով գրված էջեր: Շարժման բոլոր առաջնորդները, վտանգելով իրենց կյանքը, անօրինակ սխառներ էին գործում: Անկտորում հավատը երբեք չլքեց մեզ: Այդ առաջնորդներին պահպանում էր ամուր թիկունքը՝ ժողովուրդը, որն իր պայքարով փոթորկեց ողջ աշխարհը, քնից ելած հրաբխի պես կլանեց իր շրջակայքը: Սա էր այն հզոր պայքարը, որի արդյունքում ազատագրվեցին մեր պատմական հողերը, և ունեցանք կանոնավոր մի բանակ, որ հրաշքներ էր գործում ամենուր:

Հիմա էլ, երբ հիշում են այդ օրերը, սիրտս լցվում է անսահման կարոտով: Բոլորս մեկ էինք, մի տուն, մի համայնք, մի հանրություն,

որն ուներ մի գերագույն նպատակ՝ ապրել անկախ ու ազատ: Եվ ոչ ոք իրավունք չուներ բռնաճակով մեր հզոր կամքին, քանզի գիտեինք, որ այդ իրավունքը մեզ վերուստ է տրված: Ապրում էինք մեկս մեկի ուրախություններով, տխրություններով, ծանր օրերն էլ թեթև էինք տանում, քանի որ միասին էինք: Թվում էր,



վերջապես, իրողություն է դառնում Մեծն Չարենցի պատգամը՝ «Ով հայ ժողովուրդ, թո միակ փրկությունը թո հավաքական ուժի մեջ է»: Հավաքական էինք ու միասնական: Ի՞նչ երանելի օրեր էին: Ապրում էինք բոլորս միասին, ու անապահով շինությունն անգամ մեզ ամենաապահով էր թվում: Մեր ներքին ուժը բավարար էր ցանկացած դիմադրության համար: Այն ժամանակ մեզ սևերի ու սպիտակների, հարուստ ու աղքատի բաժանող չկար: Լուռ ու հաշտ տանում էինք Արցախյան առաջին պատերազմի բոլոր հարվածները և չէինք դժգոհում: Նույնիսկ գիտեինք, որ մարտական գործողությունների ժամանակ կորուստներ էինք ունենալու, ու մեզանից յուրաքանչյուրը սպասում էր ու պատրաստ էր, որ հաջորդ գոհն իրենն է լինելու. չէ՞ որ հայրենիքի պաշտպանությունը սրբազան պարտականություն է, ու դրա համար զոհվելն էլ՝ պատվաբեր: Այդպես ապրում էինք մեկս մեկին չնախանձելով, նաև սատարելով:

Ձիմվորը թանկ էր հրամանատարի համար և դողում էր նրա կյանքի համար: Բանակի հեղինակությունը շատ բարձր էր, ոգին՝ աննվաճ: Մենք շատ հպարտ էինք մեր ձեռքբերումներով, որովհետև միասնական ուժերով, հոգու արիությամբ հաղթահարել էինք բոլոր անմարդկային պայմանները: Հետո...

Հետո իշխանության եկան այնպիսի ուժեր, որ

սովերեցին մեր պատմության հերոսական էջերը, վիատությամբ լցրին մարդկանց հոգիները և ժողովրդի մեջ ներքին ատելություն սերմանեցին՝ բաժանելով նրանց հայաստանցիների ու դարաբաղցիների...

2020-ի 44-օրյա պատերազմը, որի կարգախոսը կեղծ «Հաղթելու ենք»-ն էր, փշրեց ու ծվատեց բոլորիս

մեր կարոտի երգերը կորուսյալ եզերքների մասին, ընդհակառակը, փորձենք խլվածը հետ բերել:

Այսօր աշխարհի բոլոր ծագերում գիտական հզոր նվաճումների զգալի մասի հեղինակները մեր ազգի ներկայացուցիչներն են, իսկ մենք՝ այսքան խեղճ ու անպաշտպան: Դա էլ ունի իր պատճառները. ոմանք պարտադրված են եղել հայտնվել օտար ափերում՝ սեփական հայրենիքում արժանավայել չզննհատվելու պատճառով (մեղավորները էլ իշխանավորներն են), իսկ ոմանք էլ նախընտրեցին փափուկ ու ապահով կյանքը:

Դրախտային այս եզերքը թողած՝ ո՞նց եք ապրում դուք, հայեր, երկրի կարոտը սրտում՝ ո՞նց եք դիմանում:

Չեմ գարմանում. հեշտ է հեռվից հայրենասեր խաղալ՝ կարոտի խոսքեր հնչեցնելով ֆեյսբուքում: Դրանք սին ու անիմաստ են քանո հոսանքի պես, իսկ մեզ իրապես հայրենապաշտ հայեր են պետք, որոնց անհանգստացնում է Արցախի ճակատագիրը, որոնք նախանձախնդիր են երկրի շենացման գործում, որպեսզի այս քաղցր պատառն էլ կյուլ չզգա անկուշտ գայլերին:

Ո՞ր եք չվում, ո՞ւմ եք պահ տալիս ձեր դատարկ տներն ու գյուղերը, մեր դավոր ոսոխի ջրաղացի՞ն եք ջուր լցնում...

Դուք այդպես էլ չսերտեցիք պատմության դասերը, ապահով կյանքի անհագ փափագը չկարողացաք հաղթահարել: Տանում եք՝ փրկե՞ք ձեր սերունդներին... ո՞չ, տանում եք, որ կործանեք...

Ուշքի՛ եկեք, հայեր, դուք արժանավոր հայ եք մնալու միայն հայրենի հողի վրա: Մնացե՛ք, որ կանգուն մնա մեր դրախտ Արցախը:

Նորից Փետրվար է՝ թախժախառն կարոտներով հագեցած, հերոսական ու փայլուն էջերով անմահացած: Փետրվարն է... ազգովի համախմբման ու միասնականության Փետրվարը, որ հրաշքների է ընդունակ...

Նորից հաղթական օրեր են գալու, մեր ամուր կամքով կրկին շենացնելու ենք մեր գողտրիկ երկիրը, և աշխարհն այն՝ սառն ու անտարբեր, հիացմունքով է խոսելու հայի մեր տեսակի մասին: Աստվածահաճ մեր ազգը դեռ շատ վերելքներ է ունենալու:

Սուրյա ԴԱԶԱՐՅԱՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԱԹ»-Ն՝ ՕՂՈՒՄ ԲԱՅՎԵՅ ԱԹՍ-ՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՈՅՆ ԱՐՅԱՆՈՒՄ

Փետրվարի 17-ին Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցում բացվեց անօդաչու թռչող սարքերի Արցախում առաջին կրթական աշխատանքը: Այն կյանքի է կոչվել Հայաստանի առաջատար տեխնոլոգիաների միության (ԱՏՄ) «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ծրագրի շրջանակում: Բացմանը ներկա էին ծրագրի ղեկավարները, ԱՅ պետական այրեր, ոլորտի մասնագետներ, այլք:



ԱՅ կառավարություն

ԱՏՄ գործադիր տնօրեն Հայկ Չոբանյանն ասաց, որ ԱԹՍ-ների լաբորատորիան իրենց ամենամեծ նպատակների և երազանքների իրականացման ճանապարհի սկիզբն է: Շուրջ 10 տարի Հայաստանում ռոբոտաշինության զարգացման ծրագրի ամենաբովանդակալից Ներդրումը դպրոցներում ռոբոտաշինության խմբակների ուղղությամբ էր, որի շրջանակներում մի քանի տարի հետո Հայաստանի ամբողջ տարածքում և Արցախում ծավալվեց «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ծրագիրը: Բայց այն առայժմ փոքր պտուղներ է տվել, հիմնական պտուղները դեռ առջևում են, որովհետև «Արմաթ»-ի սաները սովորում են 5-7 տարի, իսկ ավագ դպրոցում մոր ուղղություններ, մոր գիտելիք ստանալու կարիք ունեն: Այդ պատճառով ԱՏՄ-ն նախաձեռնել է ավելի բարդ տեխնոլոգիական գիտություններով վերազինել ավագ դպրոցը, և դրանցից մեկը անօդաչու թռչող սարքերի կամ օդային ռոբոտաշինության (օդազնացույթային) ոլորտն է:

Տասնամյակներ շարունակ ներդրումներ կատարելով այդ ուղղության մեջ՝ կարողացավ արձանագրել հաջողություն Հայաստանի դեմ պատերազմում: Մենք չպետք է վախենանք երկար ճանապարհ անցնելուց, այլ պետք է համարձակություն ունենանք երկար ճանապարհ անցնելու, որովհետև որևէ մեծ գործ ժամկետում չի լինում: Մեր մեծ գործն արդար է, և մեր պատասխանը գիտելիքի միջոցով հաղթանակի հասնելն է»,- ասաց Հ. Չոբանյանը:

Նա կոչ արեց պատանիներին սիրել

կարիքներին, մեր նպատակներին են ռազմավարական առումով համապատասխանում, ինչը բնականաբար առաջնահերթորեն պետության և կառավարության գլխավոր գործառույթն են: Այդ պատճառով միանշանակ կանգնած ենք նմանատիպ նախաձեռնությունների կողքին»,- հավաստիացրեց պետնախարարը:

ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանն ասաց, որ ցանկացած բնագավառում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրումն ինքնին գնահատելի երևույթ է, մասնավոր՝ հետպատերազմյան Արցախում և շնորհակալություն հայտնեց ԱՏՄ ղեկավարներին՝ Արցախի երեխաներին ավելի բարձր տեմպերով առաջ գնալու, ավելի մրցունակ տեղեր գրառելու գործում հնարավորություններ ստեղծելու համար:

Իսկ ԱՅ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Հայկ Խանունյանը հայտարարեց, որ Մարտակերտ քաղաքն էլ կունենա ԱԹՍ-ների աշխատանոց ֆրանսիական ջուր քաղաքի ներդրման շնորհիվ, ինչպես նաև՝ այս երկրի այլ ջուր քաղաքների հետ ձեռք բերված բարեկամության և համագործակցության արդյունքում շատ այլ դպրոցներում էլ կբացվեն այդպիսի լաբորատորիաներ:

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ծրագրի ղեկավար Սեդրակ Վարդանյանը տեղեկացրեց, որ ԱԹՍ-ների աշխատանոց կարող են հաճախել 15 տարեկանից այն տղաներն ու աղջիկները, որոնք ունեն ինժեներության, ռադիոէլեկտրոնիկայի գծով որոշակի գիտելիքների պաշար:



Դասընթացներին կարող են հաճախել ոչ միայն 3-րդ դպրոցի աշակերտները: Ձևավորվելու է երեք խումբ՝ յուրաքանչյուրում՝ 6-10 աշակերտ, շաբաթական 6 դասաժամ, ընդհանուր դասընթացը տևելու է 1 տարի, շուրջ՝ 250 դասաժամ:

ԱԹՍ-ների ծրագրի ղեկավար Խաչատուր Թադևոսյանը աշակերտներին նախնական բացատրություններ տվեց: Խմբավարը Պատարայի դպրոցում «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով աշխատող ուսուցիչ Արծրուն Արշակյանն է:

«Արմաթ»-ն օդում ծրագիրը զարգացնում են, որպեսզի արցախցից ավելի ամուր կպած լինի իր հողին:

Ի դեպ, ծրագրի մեջ է մտնում նաև օդաչուներ պատրաստելը, որը շատ անհրաժեշտ է մեր Ձիմված ուժերին: Ցանկալի է, որ 11-12-րդ դասարանների տղաները մասնակցեն ծրագրին, որպեսզի օր առաջ կարողանան օգտակար լինել Ձիմված ուժերին:

Եվ վերջում՝ ԱԹՍ-ների առաջին աշխատանոցն Արցախում իրականություն է դարձել «Արմաթ» լաբորատորիաների 500 խմբավարների ներդրումների շնորհիվ:

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՄՈ ՏՈՒՓԸ ԲԱՅՎԵՅ ՄԱՐՏԱԿԵՐՏՈՒՄ

Փետրվարի 15-ին մեկնարկեց Արցախում Թունոյի կրթական ծրագրի ընդլայնման գործընթացը: Մարտակերտում՝ Թունոյի ղեկավարության և ԱՅ բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ տեղի ունեցավ Արցախի առաջին Թունո տուփի բացումը:

Թունո տուփը փոքր, սակայն տեխնիկապես հագեցած մինի Թունո է: Այն կարող է տեղադրվել ցանկացած քաղաքում կամ գյուղում և ծառայել որպես ինքնուսուցման տարածք տեղի և մոտակա բնակավայրերի պատանիների համար: Յուրաքանչյուր Թունո տուփ հնարավորություն է տալու տեխնոլոգիաների և դիզայնի ոլորտներում կրթությամբ ապահովել տարեկան շուրջ 320 պատանու:

Բացման միջոցառմանը մասնակցում էին նաև Թունո Ստեփանակերտի շրջանավարտները և առաջադեմ ուսանողները:



Ողջունելով ներկաներին՝ Թունոյի տնօրեն Մարի Լու Փափագյանը նշեց. «Ճանաչելով Արցախը, ճանաչելով այստեղի մեր երիտասարդներին՝ վստահ ենք, որ Մարտակերտում բացվող Թունո տուփը կավելացնի նրանց ներգրավվածությունը և կնպաստի տեխնոլոգիաների ու դիզայնի ոլորտներում հմտանալու արդյունավետությանը: Սա միայն առաջին քայլն է. մեր Թունո Հայաստան ծրագրի շրջանակներում բացելու ենք տուփեր նաև Ասկերանում և Մարտունիում՝ ծրագիրը հասանելի դարձնելով Արցախի բոլոր պատանիներին և Ստեփանակերտի Թունոն վերածելով կրթական հանգույցի, որը լեցուն կլինի դասընթացներով, աշխատարաններով և նախագծերով»:

Թունո կենտրոնն Արցախի մայրաքաղաքում գործում է Հայկական բարեգործական ընդհանուր միության աջակցությամբ 2015 թվականից և այս ընթացքում ունեցել է շուրջ 4000 ուսանող, 300-ից ավելի դասընթաց, 100-ից ավելի աշխատարան և նախագիծ: Մարտակերտի, իսկ հետագայում նաև Ասկերանի և Մարտունու տուփերի ուսանողները ծրագրի ինքնուսուցման փուլն անցնելու են տուփերում, իսկ դասընթացներին մասնակցելու համար ուղևորվելու են Թունո Ստեփանակերտ հատուկ տրանսպորտով:

ԱՅ պետական նախարար Արտակ Բեգլարյանը կարևորեց Արցախում տեխնոլոգիական կրթության տարածումը. «Տեխնոլոգիական կրթության խրախուսումը Արցախի կառավարության առաջնահերթությունների թվում է: Մարտակերտում Թունո տուփի բացումը մեզ լրացուցիչ դրական էներգիա է պարգևում և սահմանում առավել բարձր արդյունքի հասնելու նշանակ: Այս կրթական փորձառությունն անչափ կարևոր է Մարտակերտ քաղաքի և հարակից գյուղերի պատանիների համար, ովքեր, համոզված են, տարիներ անց բացահայտելու են Արցախի առայժմ չներկայացված ներուժն իրենց զաղափարներով, ստեղծարար մտքով ու ճկունությամբ»:

ԱՅ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանի համոզմամբ՝ Արցախը, մասնավոր հիմա, երբ բազում դժվար լուծվող խնդիրների առաջ է կանգնած, ունի նորարար տեխնոլոգիաներին տիրապետող, խելացի երիտասարդների անհրաժեշտություն. «Արցախի երիտասարդը պետք է պատրաստ լինի ամեն ինչի, պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել ցանկացած իրավիճակում»:

Մարի Լու Փափագյանը նշեց նաև Թունո Հայաստան նախաձեռնության առաջիկա քայլերը. «Մեր բարերարների առատաձեռն նվիրատվությունների արդյունքում մոտակա ժամանակներս մեր ցանցին կգումարվի ևս 6 կենտրոն Հայաստանի Կապան, Վանաձոր, Կողբ, Էջմիածին, Հրազդան և Մարտունի քաղաքներում, ինչպես նաև առկա կենտրոններին և կառուցվողներին կից 40 նոր Թունո տուփ»:

Թունո Հայաստան նախաձեռնության շրջանակներում առաջիկա հինգ տարիներին նախատեսվում է մարզերի խոշոր քաղաքներում ունենալ տեխնոլոգիաներով հագեցած 16 Թունո կենտրոններ, իսկ փոքր համայնքներում՝ 110 Թունո տուփեր: Այս ցանցի միջոցով ծրագիրը հասանելի կդառնա բոլոր պատանիներին ողջ երկրով մեկ:

Ուսանողներն ինքնուսուցման փուլն անցնում են իրենց քաղաքում, իսկ գործնական դասընթացների մասնակցելու համար մեկնում են մոտակա Թունո կենտրոններ:

Թունո տուփի բացմանը ներկա էին ԱՅ նախագահի խորհրդակցական Լուսինե Ղարախանյանը, Աժ պատգամավորներ, Մարտակերտի ՏԻՄ ներկայացուցիչներ:

ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐ

«ՔԱՆԱԿԻ ԴԵՄ՝ ԹԵՎ, ԹՎԻ ԴԵՄ՝ ԹՈՒՅՔ»



Փետրվարի 21-ը Մայրենի լեզվի միջազգային օրն է, որն ընդունվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի 30-րդ նստաշրջանի որոշմամբ 1999թ. նոյեմբերին և նշվում է 2000թ. փետրվարի 21-ից որպես Մայրենի լեզուների իրավունքների ճանաչման ու գործածության աջակցման օր: Եարժառիքը 1948թ. Զնդկաստանից անջատված և նոր կազմավորված Պակիստանի՝ իրարից մշակույթով ու լեզվով տարբերվող երկու տարածաշրջաններում ուրդուն պետական լեզու հռչակելն էր, որով ուսնահարվում էր հարավային տարածաշրջանում միլիոնավոր մարդկանց մայրենի բենգալերենը: Դա, օրինակաբար, հանգեցրել էր այդ լեզվակիր բնակչության ընդլայնմանը, որն ուղեկցվել է բազմաթիվ զոհերով: Տարիներ տևած հակամարտության արդյունքում՝ 1956 թվականին, բենգալերենն ի վերջո պետական լեզվի կարգավիճակ ստացավ, մայրենի լեզվի իրավունքների համար մղվող պայքարը նպաստեց ազգային ինքնագիտակցության աճին: Ազգային-ազատագրական պատերազմից հետո Արևելյան Պակիստանն առանձնացավ, և 1971թ. կազմավորվեց Բանգլադեշ նոր պետությունը: Այս բուն իրադարձությունների համապատկերին էլ 1999թ. նոյեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ն փետրվարի 21-ը հռչակեց Մայրենի լեզվի միջազգային օր:

Այդ օրը 2005 թվականից նշվում է նաև Հայաստանում ու Արցախում:

հայ ժողովուրդը Մաշտոցի ստեղծած գրերի և նրանով ստեղծված գրականության ու մշակութային մյուս արժեքների շնորհիվ ունի աշխարհին ներկայանալու սեփական նկարագիր: Մեր հետագա զարգացումն սկսվեց այդ տեղից: Հայոց գրերը հայ ժողովրդի համար դարձան ազգային ինքնության, արժեհամար...

սուրբ և իրավամբ՝ ազգային հերոս: «Ինչ էլ սպասելիս լինի նրանց (հայերին) ապագայում, նրանց երկիրը միշտ պետք է մնա որպես ամենից ավելի հետաքրքրականներից մեկն ամբողջ հողագնդում, և արդեն իսկ նրանց լեզուն... մեծ ուսումնասիրություն է պահանջում... ճիշտ է հայոց լեզուն, և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն: Ես փորձում եմ, իմ փորձն առաջ է ընթանում», - ժամանակին այսպիսի գնահատական է տվել անգլիացի ակադեմիկոս Բանաստեղծ Ջորջ Բայրոնը:

Իր հերթին գերմանացի գիտնական հայագետ Մարկվարտը գրել է. «Եթե նկատի առնենք պատմական այն բացառիկ, ծանր իրադրությունը, որի մեջ Մաշտոցը կարողացավ արթնացնել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը, և նրա այդ գործը համեմատեցնել Պիպինոսի և նրա զինակից Ջիզիբիլի գործունեության հետ, որ նրանք արին գերմանական ժողովրդի համար, այս վերջինները «խեղճ թզուկներ» կերևան մտքի այդ հսկայի համեմատությամբ»:

Հայաստան աշխարհում բացվեցին առաջին դպրոցները: Դրանցից մեկն էլ նույն դարում բացվեց Արցախում՝ Ամարասում: Ու հնչեց հայերենը հայ մանուկների շուրթերին, դարձավ յուրօրինակ դրոշ, որ սերնդեսերունդ փոխանցվեց մեզ:

Ժամանակաշրջանը և Մեծն Մաշտոցի դերը լավագույնս ներկայացրել է Պարույր Սևակի իր «Եվ այդ մի Մաշտոց անուն» ստեղծագործության մեջ.

...Եվ մարդկանց հոգնած սրտերի վրա,
...Իջել էր արդեն անտարբերություն մի կործանարար
Եվ վաղվա հանդեպ,
Եվ ապագայի:

Ոչ ոք չգիտեր՝ վաղն ի՞նչ կբերի:
...Անդրձղանում էր մի անհայտություն,
Անորոշություն մի ամենաբան,
...Եվ կործանումի սուր հոտ էր փչում...

Պետք էր, շա՛տ էր պետք ինչ-որ բան անել,
Սակայն ի՞նչ անել և ինչպե՞ս, ինչպե՞ս:

21-րդ դարում մեր ժողովրդի առաջ դարձավ նույն հարցն է ծանրացած:

Լուսավոր, քաղաքակիրթ երևացող մեր դարում հայ ժողովուրդը նորից պայքար է մղում իր ինքնության հաստատման համար: Այսօր Արցախի իշխանություններն ահազանգում են միջազգային կազմակերպություններին և Մայրենի օր հռչակած ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ Արրբեջանի կողմից Արցախի օկուպացված տարածքներում հայկական հետքը ոչնչացնելու ձեռնարկումների դեմ: Իսկ ո՞ր են նրանք՝ Արցախում բազում անգամ միջազգային գի-

տաժողովների մասնակցած և իրենց աչքով հայկական մշակույթի գոհարներն ըմբռնելու արժեքներ երկրների գիտնականները, Արցախում կազմակերպված միջազգային մշակութային սիմպոզիումների, գրական ու երաժշտական, մարզական և այլ միջոցառումների մասնակցած գործիչները: Ինչո՞ւ նրանք իրենց ծայր չեն բարձրացնում Արցախի ժողովրդի ստեղծած արժեքները պղծող ու ոչնչացնող կամ սեփականող ազգերի վանդալների դեմ:

Թե՞ պարզապես ժամանակն է, որ ինչպես 5-րդ դարում, հայ ժողովրդի ծոցից ծնվի ևս մեկը, որը Պարույր Սևակի խոսքով՝ կկարողանա ապացուցել, որ այնտեղ է լույս սփռանքը սկսվում, ուր վերջանում է ամեն մի հնար...

Օկուպացված Հայրուքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Անի Ավետիսյանը լավ է պատկերացնում մայրենի լեզվի և հարազատ բարբառի դերն ու իր անելիքը ժողովրդի ինքնության պահպանման գործում.

«Առաջին դպրոցներից մեկն էլ Մետրոպ Մաշտոցի կողմից իմ Դիզակ աշխարհում է բացվել՝ պատմական Ցոր գյուղում: Այսօր և՛ Դիզակը, և՛ Ցորը բռնազավթել է թուրքն ու փորձում է վերացնել այնտեղ հայկական բուրյուր հետքերը: Գերության մեջ են իմ ծննդավայր Հայրուքը, շրջանի բոլոր գյուղերը, մեր վանքերն ու եկեղեցիները, մեր խաչքարերը, որ հայոց պատմության քարե վկաններն են, մեր դպրոցը, որի հետ այնքա՛ն թանկ հուշեր են կապված, մեր լեռներն ու ձորերը, սամնուրակ աղբյուրները: Օրհասական այս պահին ավելի է կարևորվում մայրենի լեզվի պահպանությունը: Առավել ևս, որ Հայրուքի «ս» ճյուղի բարբառը առանձնանում է Արցախի բոլոր բնակավայրերի բարբառներից, ու նրա պահպանությունը յուրաքանչյուրիս պարտքն է»:

Ամեն տարի Մայրենի միջազգային օրվան նվիրված՝ Արցախում անցկացվում է միամսյակ: Այս փետրվարին էլ կկազմակերպվեն տարբեր միջոցառումներ: Նորից կփառաբանվի մեր մայր լեզուն, կբարձրացվի նրա անարտաբան պահպանման հարցը: Բայց ամենակարևորը՝ այն նոր սերնդին պետք է մղի իրական հայրենասիրության՝ անցյալը չմոռանալով հանդերձ՝ տեր կանգնելու իր երկրին: Այսօր թշնամու ոտնձգությունները հենց արցախցուն իր պատմական հայրենիքից դուրս մղելու են ուղղված: Նոր Մաշտոց, անշուշտ, մեզ պետք չէ, բայց մեզ պետք է, որ նոր սերունդն իր մտքի ու ժողովրդի մեր ժամանակների այն հզոր զենքը, որը հնարավորության կտա նորատիպ մեր մաքառման մեջ «Քանակի դեմ՝ թև, Թվի դեմ՝ թռիչք» պարզել:

Հավատում ենք, որ դա շատ չի ուշանա:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ



կարգի պահպանման հզոր միջոց մինչ օրս: «Մետրոպ Մաշտոցի գյուղը, անտարակույս, այն հզոր զենքն էր, որի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը 5-րդ դարի մեծ պայքարում և մտնելով քաղաքակրթված հնագույն ժողովուրդների ընտանիքի մեջ՝ զարգացրեց իր ինքնուրույն մշակույթն ու շատ պարուստ գրականությունը», - գրել է հայ մեծ պատմաբան Հակոբ Մանանդյանը: Մետրոպ Մաշտոցի կատարած գործը նաև օտարազգի մեծերն են գնահատել: Նա դարձել է բազմաթիվ ասքերի հերոս, սուրբերի

ԿԱՅԱՑԱՎ «ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈՒԿԻ ԿԱՅՔԻ ԶՆՈՐԱՆԴԵՍ

Փետրվարի 15-ին Պոլ Ելյուարի կենտրոնում կայացավ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈՒԿ-ի <https://www.artsakhmonuments.com> կայքի շնորհանդեսը: Այն տեղեկատվական պատերազմում համալրելու է մեր գիմնանոցը՝ դառնալով մեր պատմամշակութային ժառանգության պաշտպաններից մեկը ու հնարավորության սահմաններում աշխարհին ներկայացնելու Արցախը, նրա մշակութային հարստությունը, այդ մշակույթը կերտողներին ու կրողներին:

ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Գայանե Գրիգորյանը շնորհավորեց բոլորին. «Տեղեկատվական պայքարում մեր անելիքները շատ են, և այս կայքը կարող է դառնալ այդ պայքարի անհրաժեշտ ու կարևոր զենք: Ողջունելի է, որ կայքը բազմալեզու է, և հասանել է նաև արտաքին լսարանին»: Իր խոսքում ԱՀ նախագահի խորհրդական Արմեն



Սարգսյանը հույս հայտնեց, որ կայքը մեծ տարածում կգտնի համայն հայության շրջանում և մեր պատմամշակութային ժառանգությունը ներկայացնող ընդհանրական հարթակ կդառնա:

Կայքի ստեղծման համար «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈՒԿ-ի տնօրեն Արմինե Հայրապետյանը հատուկ շնորհակալություն հայտնեց ԿԳՄՍ նախկին նախարար Լուսինե Ղախախանյանին, Ֆրանսիայում Հայ-ֆրանսիական մշակութային ասոցիացիային՝ ի դեմս Արթուր Արզոյանի և բոլոր գործընկերներին:

ԱԿՆԱՐԿ

ԲԵՐԶՈՐ. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏԱՐԻ ԱՆՑ

Չյան համատարած ճերմակի մեջ չէի նկատել, թե ինչպես սպիտակ մի շուն հայտնվել է մոտս: Այնպիսի պաղատալից աչքերով էր նայում, որ լավաշից մնացած վերջին պատառը նետեցի ոտների մոտ:

Հետպատերազմյան Բերձորում ի՞նչն է շատ՝ ամսեր շները: Նրանց տերերը 2020-ի նոյեմբերին լքեցին իրենց

ամեն ինչ ասես քարացած է, կյանքը՝ կանգ առած: Ինչպե՛ս այս տպավորությունը չստանաս, որ 2 հազար բնակիչ ունեցած Բերձորում այսօր եթե փողոցում մեկին հանդիպում ես՝ ուրախանում ես:

Սուրբ Համբարձման եկեղեցում մատուցված Սուրբճննյան պատարագին առանց այն էլ քիչ բնակիչներ

հատված: Ճարահատների կողքին կան նաև մարդիկ, ովքեր վերադարձել են, քանի որ այստեղ է իրենց վերջին 25 տարվա բնակության վայրը: Նրանց նայելով ուրիշներն էլ են վերադառնում: Մեծամասնությունը չի գալիս, որովհետև երաշխիք չկա, որ ճանապարհի կառուցումից հետո քաղաքը կթողնվի մեզ: Վերադառնալ ցանկացողներին օժանդակում են, սակայն քարոզել, որ վերադառնան, նման պատասխանատվություն ինձ վրա վերցնել չեմ կարող:

Վերադարձած բերձորցիները վիատված չեն: Նրանք գիտեն,



տները: Թշնամին Բերձոր չէր մտել, տխրահռչակ հայտարարությամբ Բերձորը Ադրբեջանին չէր հանձնվել, ինչպես շրջանի գրեթե բոլոր բնակավայրերը: Շահունյանի շրջանի հանձնմամբ Մարտակերտ-Վարդենիս ճանապարհը փակվեց մեր առաջ: Բերձորով է անցնում Ստեփանակերտը Երևանին կապող միակ մայրուղին, այսօր մարդասիրական միջանցքը, որ վերահսկում են ռուսական խաղաղապահ ուժերը: Նոյեմբերի 9-ի հայտարարության համաձայն երեք տարվա մեջ պիտի կառուցվի Արցախը Հայաստանին կապող նոր ճանապարհ: Դրանից հետո ի՞նչ է սպասվում Բերձորին՝ հայտնի չէ: Այս անորոշությունը, մեծ մասամբ արհեստակցորեն ստեղծված խուճապը դատարկեցին Բերձորը, պատերազմի օրերին տարհանված բերձորցիները վերադառնալու մասին ասես մոռացան:

Նոյեմբերի 9-ի երեկոյան հրետակոծությունն ամենաուժեղն էր, ավերածությունները՝ ևս: Իմ տպավորությամբ քաղաքն արտաքուստ առաջվան է, միայն որոշ տների դուռ-պատուհան հանված է, որոշ շինությունների ապակիները՝ ջարդված... Ցուցանակները թարմությունը չեն կորցրել և իրավիճակին անձանոթ մեկը ձմռան ցրտին առաջին հերթին կփորձի մտնել պատահած սրճարանը՝ մի գավաթ տաք սուրճ ընպելու: Դուռը փակ կգտնի: Քաղաքը, կրկնում են, նույնն է, բայց, ինչպես հեքիաթներում է լինում, չար կախարդանքով

րից քչերն էին ներկա: Հավանաբար այս ձմռանը տեղացած առաջին առատ ձյունն էր պատճառը: Շաբաթական կարծես երեք օր ադրբեջանական ավտոշարասյուն է անցնում քաղաքով: Հինգշաբթի էր՝ անցնելու օր: Չեկան, չանցան: Երևի դարձյալ՝ ձյան պատճառով:

Շրջանային հիվանդանոցը չի աշխատում, երկու դպրոցներից ոչ մեկը չի գործում: Երեխաները Աղավնոյի դպրոց են գնում: Ավտոբուսը նրանց անվճար տանում և դասերից հետո տուն է բերում:

Աղավնոյի դպրոցում տեղի ունեցած տնօրինչի արարողությունից հետո լրագրողների մեր խումբը վերադարձավ Բերձոր: Վերադարձավ և քաղաքապետ Նարեկ Ալեքսանյանը: Պայմանավորվել էինք գրուցել քաղաքապետարանում: Քաղաքապետարան կոչվածը մի սենյակ է շրջվարչակազմի շենքի 2-րդ հարկում, վարչակազմի ղեկավարի առանձնասենյակի հարևանությամբ:

որ իրենց տանը չապրելը ճանապարհ կբացի ուրիշի առաջ, որ իրենց տունդարձով, հնարավոր է, կանխագծված պլաններ փոխեն: Չեն տրտնջում: Նրանք մի բանի կարիք չատ ունեն՝ հասարակ մարդկային ուշադրության: Հոգևոր դասի կողմից դա դրսևորվում է տեղի եկեղեցում ամիսը մի անգամ պատարագ մատուցելով: Իսկ այլ կառույցների՞, մեզ-միջ յուրաքանչյուրի՞... Հավատացե՛ք՝ ձեր այցով անչափ ուրախություն և ոգևորություն կպարզվեք համառ, տոկուն, դաժան իրականության հետ չհամարկերպվող, իրենց լինելիությամբ այդ իրականությունը փոխել ջանացող, կյանքի վայրէջքներին մինչև վերջ դիմադրելու պատրաստ այդ մարդկանց:

...Պատրաստվում էինք Ստեփանակերտ վերադառնալ: Սպիտակ շունն արագաբայլ մեզ մոտեցավ՝ արդեն ընկեր շների հետ: Մի քանի անգամ հաչեց: Երևի ուզում էր հասկացնել, որ քաղցած են: Մարդ ենք՝ հասկացանք Բերձորի պահպաններին:

Հեքիաթները վերջանում են նրանով, որ հայտնվում է կտրիճ մեկը, որը, սպանելով վիշապին կամ կախարդի չար ոյութանքը հաղթահարելով, կենդանացնում է մեռյալ քաղաքը, և կյանքն այն կետից, որում կանգ էր առել, շարունակվում է:

Մեր կյանքը հեքիաթ է: Բայց հեքիաթներից շատ բան կարելի է ուսանել, օրինակ՝ ինչպես հաղթել չարին:

Շովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվություն

ԿԱՅԱՆԱՎ ԱՐՊՉ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Փետրվարի 15-ին գումարվել է ԱրՊՉ խորհրդի նիստ, որի ընթացքում ԱրՊՉ ղեկավար Արմեն Սարգսյանը ներկայացրել է 2020-2021 ուստարվա կատարած աշխատանքների մասին հաշվետվություն: Նիստի օրակարգի առաջին հարցով ԱրՊՉ խորհրդի նախագահ է ընտրվել ԱՅ պետնախարար Արտակ Բեգլարյանը: Շնորհակալություն հայտնելով



նախորդ նախագահին ու խորհրդի անդամներին կատարած աշխատանքի համար՝ խորհրդի նորընտիր նախագահը պատրաստակամություն հայտնեց իր գործունեությամբ նպաստել բուհի կրթության արդյունավետության բարձրացմանը, որակի շարունակական բարելավմանը, համագործակցային շրջանակների ընդլայնմանը:

Այնուհետև ԱրՊՉ ղեկավարը, ըստ բնագավառների, ներկայացրեց անցած ուստարում կատարած աշխատանքները կրթական, գիտական, միջազգային համագործակցության, ուսանողների հետ տարվող աշխատանքների, ֆինանսատնտեսական ուղղություններով: Ռեկտորի խոսքով՝ 2020 թվականի մարտահրավերները մեծապես վնասել են նաև կրթական համակարգը: Դժվարությունները նախ՝ համավարակով, ապա՝ 44-օրյա պատերազմով էին պայմանավորված: Հեռավար կրթության կազմակերպման ուղղությամբ, որպես արձանագրված հաջողություն, ղեկավարն առանձնացրեց Google For Education էլեկտրոնային հարթակի ներդրումը, որը հնարավոր դարձրեց ճգնաժամի պայմաններում արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

44-օրյա պատերազմից անմիջապես հետո՝ 2020 թ. դեկտեմբերի 1-ին, բուհում անցումը ավանդական ուսուցման նպաստեց արագ ինքնակազմակերպմանը և բնականորեն կյանքի վերականգնմանը: «Հաշվետու տարում Արցախի պետական համալսարանը հաջողությամբ անցել է որակի արտաքին հավաստման գործընթացը և արժանացել ինստիտուցիոնալ հավատարմագրման՝ 4 տարի ժամկետով: ԱրՊՉ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը 2021թ. մարտի 9-ից մարտի 13-ն ընկած ժամանակահատվածում», - որպես գլխավոր ձեռքբերում նշել է ղեկավարը:

Կրթական գործունեության ուղղությամբ, ղեկավարի խոսքով, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերլուծություն և արդիականացում, հաստատվել են նաև նորերը: Այդ ընթացքում Արցախի մայր բուհը մասնագետներ է պատրաստել բակալավրիատի 19 ու մագիստրատուրայի 20 կրթական ծրագրերով՝ 5 ֆակուլտետի և 16 ամբիոնի միջոցով, 2020-2021 ուսումնական տարում բակալավրիատի ուսանողների թիվը կազմել է 1960, մագիստրատուրայի ուսանողների թիվը՝ 315, ասպիրանտների թիվը՝ 19: ԱրՊՉ-ում ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում խթանելու համար ներդրվել է «Հետազոտության պլանավորում» առարկան. բոլոր

առարկաների շրջանակներում ուսանողներն ինքնուրույն աշխատանքներ են իրականացնում: Տարվա ընթացքում ԱրՊՉ-ում դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են առցանց գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ և ընթերցումներ: «Ուսումնական տարվա ընթացքում հրատարակվել է «ԱրՊՉ գիտական տեղեկագիր» հանդեսը՝ հասարակական և բնական ուղղություններով: Համալսարանի դասախոսները հրատարակել են 113 գիտական աշխատանք, որից 8 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 102 հոդված», - ընդգծել է ղեկավարը՝ առանձնակի կարևորելով նաև ԱրՊՉ գիտախորհրդի որոշմամբ հիմնադրված «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որի 4 հատորները հրատարակվել են հաշվետու ժամանակաընթացքում:

Միջբուհական համագործակցության ուղղությամբ կատարված աշխատանքներից խոսելով՝ ղեկավարը նշել է, որ առ այսօր ԱրՊՉ-ն համագործակցության պայմանագրեր ունի արտերկրի, ՀՀ և ԱՀ շուրջ 50 բուհերի, գիտական և այլ կառույցների հետ: «ԱրՊՉ գործունեության առանցքային դրույթը շարունակում է մնալ ուսանողների հանդեպ պատասխանատվությունը: Պատերազ-



մի ժամանակ ԱրՊՉ 26 ուսանող նահատակվել է՝ իրենց կյանքի գնով ապահովելով մեր ապրելու հնարավորությունը: Հետպատերազմական շրջանում մայր բուհի ղեկավարությունը զգալի ջանքեր է գործադրել համալսարանական գործունեությունը բնականոն հուն վերադարձնելու ուղղությամբ», - նշել է ղեկավարը՝ ներկայացնելով ուսանողների հետ տարվող աշխատանքների ուղղությամբ կատարված տարաբնույթ միջոցառումները:

Բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում եղել ու մնում են համալսարանականների սոցիալական վիճակի բարելավման հարցերը: Միջոցառումներ են ձեռնարկվել առավել կարիքավոր ուսանողներին և աշխատակիցներին նյութական աջակցություն ցույց տալու ուղղությամբ, վերանորոգման լուրջ աշխատանքներ են տարվել ուսանողական հանրակացարանում: Ռեկտոր Արմեն Սարգսյանը համալսարանի գործունեության նկատմամբ հոգատարության և բարձրացված խնդիրների լուծման, գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար շնորհակալություն հայտնեց ԱՅ գործադիր և օրենսդիր իշխանության մարմիններին:

Ռեկտորի հաշվետվությունը խորհուրդը գնահատեց բավարար: Օրակարգի հաջորդ հարցով ԱրՊՉ հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նարինե Գրիգորյանը ներկայացրեց հաշվետվություն 2021 ֆինանսական տարվա արդյունքների մասին, հաստատվեց 2022 թ. ծախսերի նախահաշիվը: Այլ հարցերում նիստը քննարկեց բարձրագույն կրթության զարգացմանը, բնագավառում առկա խնդիրներին և դրանց լուծման ուղիներին վերաբերող հարցեր:

ԱրՊՉ լրատվության և հանրային կապերի բաժին

ԱՅԼԵՆՏՐԱՆԸ

ԲԱՅՕՐԹՅԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ



դափոխվել լսարանային միջավայր:

Բացօթյա կրթության կարևորության ու կիրառման մասին գրուցել ենք կրթության և մանկու- թյան փորձագետ, «Իմ Ազրեանառը» միջազգային ծանրարի հիմնադիր Սաթենիկ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ հետ:

- Ո՞րն է բացօթյա կրթության նպատակը: Ինչքանով է այն համարելի ֆորմալ կրթու- թյան հետ:

- Բացօթյա կրթության նպատակն է ստեղ- ծել ավելի առողջ և նպաստավոր միջավայր երեխաների կրթության և զարգացման հա- մար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բացօթյա կրթությունը ազդում է երեխանե- ռի ինքնուրույնության և ինքնավստահության զարգացման, որոշումներ կայացնելու, ստեղ- ծագործականության, ինչպես նաև կարեկ- ցանքի և բնության նկատմամբ հոգատար վե- րաբերմունքի վրա: Բացօթյա կրթությունը

Բացօթյա կրթությունը պլանավորված ուսուց- ման ձև է, որը տեղի է ունենում դասասենյակից դուրս: Այն բնության մեջ իրականացվող կրթա- կան գործընթաց է, որը ներառում է սոցիալական փոխազդեցության, ներառական, անհատական և խմբային ուսուցման սկզբունքները: Բացօթյա կրթության ակունքերը հին են: Ընդունված է ասել, որ այն առաջ է եկել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին Գերմանիայում, որ- տեղ սկսեցին կազմակերպվել ծանրարներ: 20- րդ դարի 2-րդ կեսից արդեն լայն տարածում ստացավ ինչպես սկանդինավյան երկրներում, այնպես էլ ԱՄՆ-ում, Նոր Զելանդիայում և Ավստ- րալիայում: Ի վերջո, կրթությունն ի սկզբանե հենց բացօթյա է եղել և միայն հետագայում է տե-

կարելի է օգտագործել ցանկացած առարկա- յի դասավանդման համար: Այս պրակտիկան կիրառվում է շատ երկրներում:

- Որո՞նք են հիմնական սկզբունքներն ու գործիքակազմը բացօթյա կրթության մեջ:

- Առաջնայինը և գլխավորը բացօթյա մի- ջավայրն է. ցանկալի է, որ այն լինի բնության մեջ՝ լինի դա անտառ, թե զբոսայգի: Բացօթյա կրթության մեջ է մտնում նաև ուսուցումը ավանդական դասասենյակային միջավայրից դուրս: Որոշ մասնագետներ բացօթյա կրթու- թյուն են համարում նաև ուսուցումը, օրինակ՝ բանձարանում:

Այստեղ շատ կարևոր և առանցքային դեր ունի, անշուշտ, ուսուցիչը, այն առումով, թե ինչպես օգտագործել միջավայրը ու այն դարձնել կրթության գործիք: Մեր փորձից նշենք, որ մեր ճամբարը կրթություն է բնության մեջ, բնության և աշխարհի, բնության և մար- դու, բնության և արժեքների մասին: Բնու- թյունն իր մեջ ունի բոլոր դասերն ու հարցե- ռի պատասխանները, միայն պետք է կարո- դանալ կարդալ այդ «գիրքը»:

Այստեղ երեխան դառնում է ուսուցման գլ- խավոր դերակատարը, իր փորձով է սովո- րում, այս գիտելիքը մնայուն է և շատ առում- ներով ունի դրական ազդեցություն՝ սկսած մտավոր և ֆիզիկական առողջությունից մինչև գիտելիքների ու հմտությունների ուսու- ցում: Կա նաև այսպիսի մոտեցում, ըստ որի, երբ երեխան առնչվում է բնական միջավայրի հետ, օրինակ՝ ծառեր, բույսեր, միջատներ, նրա մեջ արթնանում են այն բնական տա- դանդն ու գիտելիքը, որն ամբարված է նրա մեջ ի ծնե: Իսկ երբ նա ծնված օրից միայն առնչվում է մարդու կողմից ստեղծված իրերի հետ, ապա այս հնարավորությունը սահմա- նափակվում է: Սկզբունքն առաջին հերթին սերն է բնության նկատմամբ և սերը երեխա- ների համոզել: Բացօթյա կրթությունը նաև ստեղծագործական պրոցես է, այստեղ նաև շատ կարևոր է հետևել երեխաների արձա- գանքներին ու լսել նրանց:

- Ինչքանով է Հայաստանում (Արցախում) բացօթյա կրթությունը կիրառելի:

- Եթե կա բնություն, օրինակ՝ քաղաքային միջավայրում այգի, այն հեշտորեն կարելի է

կիրառել և անհրաժեշտ է կիրառել: 2019 թվա- կանին Հայաստանում հիմնել ենք «Իմ Ազրե- անառը» միջազգային ծրագիրը, որի նպա- տակն է համադրել գյուղական միջավայրը կրթական գործընթացի հետ: Սա հնարավորու- թյուն է տալիս մեր երեխաներին ավելի ուշա- դիր, հոգատար լինել իրենց շրջապատի նկատմամբ:

- Ինչպե՞ս կարող ենք օգտագործել բաց- օթյա կրթությունը հետպատերազմյան իրավի- ճակում երեխաների (պատանհներ) հետ աշ- խատելիս:

- Հատկապես հետպատերազմյան և ճգնա- ժամային իրավիճակներում բացօթյա կրթու- թյունը շատ ավելի անհրաժեշտ է, քանի որ այն ունի նաև թերապևտիկ ազդեցություն: Կան բազմաթիվ հետազոտություններ, որոնցում ուսումնասիրվել է, թե ինչ ազդեցու- թյուն են ունենում, օրինակ, ծառերը մարդու առողջության վրա, և նույնիսկ մի քանի ժամը կարող է օգնել սթրեսի, սրտային հիվանդու- թյունների, արյան ճնշման, իմունային համա- կարգի բարելավման վրա, այն նաև օգնում է, որ մարդն իրեն ավելի երջանիկ զգա: Փորձեք պարզապես դուրս գալ և քայլել անտառով կամ զբոսայգով, կզգաք, թե ինչպես է ուրա- խության մի մեծ չափաբաժին լցվում ձեր մեջ:

Սիրանուշ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՅ ԱՐ ԳԻՐՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՉԱԿՈՒԿՅԻ, ԵՐԻՊԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՒ ՍԱՊՐՈՒԿԻ ԽԱՐԳԵՐԻ ՄՉԳՐԱԿԱՆ ԽԱՆՁՆԱԺՈՂՎԻ ՓՈՐՁԱԳԵՊ

ԹԵ ԻՆՉՊԵՆ ՍՈՎՈՐԵՅՆԵԼ ՍՈՎՈՐԵԼ



«Լուսարար»-ի գրուցակիցը կր- թության փորձագետ, մանկավարժ Արսեն ՎԱՐԴԱՆՅԱՆՆ Է

- Մեր գրույցը սկսենք՝ խոսելով հայոց լեզվի անաղարտության մա- սին: Ցավոք, այսօր շատ դեպքեր են լինում, երբ մայրենի լեզուն առա- ջին պահանջ դուրս է մղվում...

- Հայոց լեզվի անաղարտության վերաբերյալ, իհարկե, անընդհատ բարձրաձայնվում ու նշվում է, որ տարբեր հարթակներում հայոց լե- զուն աղավաղվում է: Ես սա միշտ համեմատում եմ մեր կյանքի հետ. ինչպես որ մեր երկրում շատ բաներ տարբերային ու քառասյին են դար- ձել՝ և՛ արժեքները, և՛ կենսակերպը, պետություն-քաղաքացի հարաբե- րությունները, այդպես էլ մեր լեզուն է: Լեզուն, լինելով հասարակական երևույթ, չի կարող այս ամենի ամե- նաազդեցությունն իր վրա չկրել: Լեզվի անաղարտության պահպան- ման հարցում կարևոր է դպրոցում լեզվի նկատմամբ ճիշտ վերաբեր- մունք ձևավորելը: Շատ կարևորում են նաև ՁԼՄ-ների ազդեցությունը լեզվի անաղարտության պահպան-

ման գործում, որովհետև լրատվա- միջոցներով հնչող և տպագիր սխալներն այնքան են տարածվում, որ նույնիսկ դպրոցում ուսուցիչը դժվարանում է սովորողի մեջ ամ- րապնդել ճիշտ ձևը:

- Ժամանակակից կրթական աշ- խարհն ինչո՞վ է առանձնանում: Հա- յաստանը կարողանո՞ւմ է համըն- թաց քայլել...

- Ինչպես կյանքն է դիմամիկ և արագ փոփոխվում, այդպես էլ կր- թական ոլորտը, և հաջողություն են ունենում այն երկրներն ու կրթա- կան համակարգերը, որոնք կարո- դանում են գնալ դրա հետևից: Ան- շուշտ, վերցնել միայն միջազգային փորձն ու փորձել դրանով բարեփո- խումներ իրականացնել մեր կրթա- կան համակարգում՝ հնարավոր չէ, որովհետև ամեն երկիր ու հասարա- կություն ունի իր կարիքներն ու առանձնահատկությունները: Գիտե- լիք, կարողություններ, հմտություն- ներ, արժեքային համակարգ. այս բաղադրիչների միասնությամբ պետք է փորձենք առաջին հերթին մատուցել մնայուն գիտելիք, որը գործնականորեն կվերածվի կարո- դությունների, հմտությունների, և այդ գիտելիքով մարդու մեջ նաև արժեհամակարգ կծնավորվի: Եվ այստեղ պետք է նշենք, որ շատ կարևոր է սովորածի նկատմամբ վե- րաբերմունքը՝ ինչպես է գնահա- տում իր սովորածը, ինչպես է սովո- րում, ինչպես է մի կետի հասնում և ինչպես է կարողանում իր սովորա- ծը ծառայեցնել իր կարիքներին, նպատակների իրականացմանը: Ամենակարևորը, որ կրթությունն ու- նենա գործնական ուղղվածություն,

որովհետև միայն տեսական գիտե- լիքով հնարավոր չէ արդյունքի հասնել: Գիտելիքը հիմքն է, որի վրա հմտություններն ու կարողու- թյունները, արժեհամակարգը ձևավորվում են, իսկ այդ պարագա- յում կրթությունը լուծում է իր առջև դրված խնդիրը:

- Դուք նաև դասավանդում եք, ի՞նչն էք վեր դասում մանկավար- ժության ասպարեզում:

- Մանկավարժության բնագավա- ռում շատ կարևոր է երեխային սո- վորեցնել սովորել, որ յուրաքանչ- յուրն էլ կարողանա իր կարողու- թյունների սահմանում անել առա- վելագույնը, բացահայտել իր ներ- քին ռեսուրսները, կարողանա հաս- կանալ՝ ինչն է իր համար կարևոր, առաջնային, ինչը կարող է ավելի լավն անել, շեշտադրել այդ ուղղ- վածությունը, զարգացնել, հետա- գայում մասնագիտություն ձեռք բե- րել և սովորեցնել սովորել ամբողջ կյանքի համար՝ ոչ միայն դպրոցա- կան ու համալսարանական տարի- ներին, այլև ամբողջ կյանքի ընթաց- քում, որ մարդը կարողանա սովո- րել և իր սովորածը ծառայեցնել իր կարիերայի զարգացմանը, առա- ջընթացին, իր անձնական կյանքի բարօրության ամրապնդմանը: Եվ ամենից ավելի կարևորում են հայ- րենասեր, հայրենիքը ճանաչող, սի- րող, գնահատող, գիտելիք և ուսում կարևորող սերունդ դաստիարա- կելը:

- Ուսուցիչ-աշակերտ հարաբե- րությունների մասին ի՞նչ կասեք:

- Ուսուցիչ-աշակերտ հարաբե- րություններում ինձ համար առաջ- նայինը փոխադարձ հարգանքի, ըն-

կերության, վստահության վրա կա- ռուցված հարաբերություններն են: Աշակերտը պետք է իմանա, որ ու- սուցիչն իր վստահելի ավագ ըն- կերն է, որին կարող է ապավինել, որի մոտ կարող է շատ հանգիստ սխալվել և այդ սխալի համար չպատժվել, որովհետև դպրոցն այն ապահով և անվտանգ միջավայրն է, որտեղ մարդը կարող է սխալվել: Սխալվելու դեպքում ես ինքս չեմ ջղայնանում աշակերտների վրա, բայց բացատրում եմ, որ կարևորն այդ սխալից հետևությունն անելն է և շտկելը: Եթե կարողանում ենք դրան հասնել, ուրեմն հաջողություն կունենանք հարաբերություննե- րում: Ինձ համար անհանդուրժելի են ուսման ու գիտելիքի նկատմամբ անտարբերությունը, և միայն այդ դեպքում կարող եմ երեխային նկա- տողություն անել, երբ նա չի սովո- րում: Բայց անպայման փորձում եմ գտնել այն եղանակը, որով նրան կնոտիվացնեմ, որ սովորի: Գիտե՞ք, ամենահաճելի պահն այն է, երբ բո- լորը ձգտում են, սովորում են, առա- ջընթաց ու առողջ մրցակցություն կա, և ամենակարևորներից մի բան էլ՝ չկա գնահատականի նկատմամբ այդ անհամաստ մոլուցքը, որը ոչինչ չի փոխում իրենց կյանքում կայաց- ման և զարգացման գործընթացում:

- Ձեր համահեղինակությամբ հրատարակվել է 7-րդ դասարանի «Գրականություն» դասագիրքը: Ին- չո՞վ է այն տարբերվում նախորդ դասագրքերից:

- Իմ ու գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանի համահեղինակու- թյամբ լույս է տեսել «Գրականու- թյուն» առարկայի 7-րդ դասարանի

նոր դասագիրքը, որը դարձյալ շտ- կունների, փոփոխությունների կա- ռիք ունի: Մենք շատ կարևորում ենք այդ դասագիրքը գործածող մանկավարժների, կրթության փոր- ձագետների կարծիքը և սիրով քն- մարկում ենք ցանկացած հետաքը- քիր տեսակետ:

Դասագիրքը կազմելիս կարևորել ենք աշակերտի հետ խո- սող դասագիրք լինելու առանձնա- հատկությունը. երեխայի համար դասագիրքը պետք է լինի գրավիչ, որովհետև ամեն ինչի դեպքում առաջին ծանոթությունը սկսվում է հենց արտաքին տեսքից և ապա այն բովանդակությունից, որը ներ- կայացված է: Կարևորել ենք ժամա- նակակից տեղեկատվական սարքե- ռի օգտագործումը՝ հանուն և ի նպաստ գիտելիքի: Եվ իհարկե, դա- սագրքում շատ կարևորվել է գրա- կան երկ վերլուծելու, հասկանալու, ըմբռնելու, գրականությունը շատ գրավիչ առարկա դարձնելու մի- տումը: Երեխաներն աշխատում են տեքստերի վրա, վերլուծում, մեկ- նաբանում, բառապաշար ու պատ- կերավորման համակարգ ուսում- նասիրում, քննարկումներ ու բանա- վեճեր կազմակերպում, տեքստա- յին գանազան տարբերակներով աշխատանքներ կատարում: Այ- սինքն՝ մեթոդական առումով այն շատ հագեցած է և կարող է բացա- հայտել, զարգացնել ու ամրապնդել աշակերտի կարողությունները, զարգացնել մտածելու, վերլուծե- լու, արտահայտվելու, ստեղծագոր- ծելու և այլ կարողություններ:

Ջրուցեց ՎՈՎԱ ԱՐՁՈՒՍԱՆՅԱՆԸ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՆՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԲՐՏՆԱԶԱՆ ԱՃԻԱՏԵԼ ՈՒ ՎԱՂԹԵԼ



Մանվել Պետրոսյան: Ծնվ. 2004թ. մայիսի 9-ին: Բռնցքամարտի Հայաստանի սպորտի վարչետ, 2018թ. ՀՀ բռնցքամարտի առաջնության չեմպիոն, 2018թ. Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր, 2020թ. ՀՀ բռնցքամարտի պատանիների առաջնության չեմպիոն, 2021թ. ՀՀ բռնցքամարտի երիտասարդների առաջնության չեմպիոն, 2021թ. Եվրոպայի բռնցքամարտի առաջնության ֆինալիստ, 2022թ. ՀՀ բռնցքամարտի երիտասարդների առաջնության չեմպիոն, Միջազգային մրցաշարերի բազմակի չեմպիոն: Ռիզուս ունեցել է 70 մարտ, որից 64-ուն հաղթել է: Մարզվում է ԱՀ վաստակավոր մարզիչ Նարեկ Աբրամյանի մոտ:

սիրված առաջատար մարզածեցից է: Ողջունելի է, որ լինելով օլիմպիական մարզածեցի ու հաշվի առնելով դեպի Օլիմպիական տանող դժվար ճանապարհը, այնուամենայնիվ, շատերն են նախընտրում բռնցքամարտով զբաղվել: Դժվարություններից չվախեցող, նպատակալաց եւ ուժեղ մարզիկ է

Մանվել Պետրոսյանը, որի երազանքն է միշտ բարձր պահել մեր Արցախի դրոշը ու կարողանալ օգնել, որ Արցախը միշտ կանգուն մնա:

Մանվել Պետրոսյանը Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ֆիզկուլտուրայի բաժնի ուսանող է: Բռնցքամարտել սկսել է 13 տարեկանից: Ապրելով իր ծննդավայր Մարտունու շրջանի Քերթ գյուղում՝ սկսել է պարապմունքների հաճախել Ստեփանակերտ քաղաքում մարզիչ Նարեկ Աբրամյանի մոտ: Ինչպես նշում է Մանվելը, շատ մարզածեցիներ է փորձել, բայց չի հավանել: Բռնցքամարտն է նրան դուր եկել: Նա սկսել է քրտնաջան պարապել, չի մահանջել դժվարությունների առջև, ձգտել է հասնել իր նպատակներին:



մերը գրագետ են աշխատում:

Երբ հարցնում ենք, թե ընտանիքում ինչպես են վերաբերվում մարզածեցի ընտրությանը, Մանվելը պատասխանում է, որ արդեն՝ նորմալ: Սկզբնական շրջանում այդքան էլ չէին ողջունում, բայց հայրը միշտ աջակցում էր, իսկ հիմա շատ ուրախանում է որդու հաղթանակներով:



Որպես մարզական հաջողությունների շարունակություն՝ Մանվել Պետրոսյանը ցանկանում է մասնակցել Օլիմպիական խաղերի եւ վատահ է, որ դա իրեն կհաջողվի: Հաջողության հասնելու հարցում մեծ է մարզչի դերը. «Մարզիչն առաջին հերթին շատ ուրախ է իր սանի ոսկե մեդալով, բայց մինչ դրան հասնելը մենք երկուսով քրտնաջան աշխատում ենք: Մարզիչն իր ինֆորմացիան է փոխանցում ինձ, որը ես պետք է ճիշտ ընկալեմ, տիրապետեմ ու հաղթեմ»:

Լավ բռնցքամարտիկ լինելու Մանվելյան բանաձևը հետեւյալն է. բռնցքամարտիկը պետք է լինի հանգիստ, կարողանա համազոր շփվել մարդկանց հետ եւ ամենակարեւորը՝ լինի հավասարակշռված ցանկացած ոլորտում:

Ներկայում աշխատում են այն ուղղությամբ, որ լավ պատրաստվեն ապրիլում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Որից հետո կմասնակցեն Աշխարհի առաջնության: Նպատակը հիմա աշխարհի առաջնությունից մեղալ նվաճելն է:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՎԻՆՉՈՒՆԻ ՓԱՅՏԵ ՄԱՐԴԸ

Եթե երբեք այցելել եք վինգզուների մարզադահլիճ կամ հետաքրքրվել եք վինգզուներ մարտարվեստով, ուրեմն անպայման տեսել կամ լսել եք մի յուրահատուկ սարքի մասին, որն օգտագործում են մարզիչներն ու մարզիկները հիմնականում հարվածների եւ պաշտպանության կատարման համար: Այո, խոսքը այն մարզասարքի մասին է, որը կոչվում է փայտե մանեկեն կամ փայտե մարդ:

Փայտե մանեկենի պատմությունը սկսում է 2հինաստանից՝ Սիլ Լիմ կամ Շաուլին վանքի ժամանակներից: Վանքում կար միջանցք, որտեղ տեղադրված են եղել 108 փայտե մանեկեններ: Աշակերտները, որոնք փորձության էին ենթարկվում, պետք է շարժվեին այդ միջանցքով եւ ցուցադրեին հատուկ տեխնիկաներ յուրաքանչյուր մանեկենի վրա խիստ սահմանափակ ժամանակաընթացքում, որը չափվում էր վառվող մոմով: Մանեկեններն այնպես էին կառուցված, որ աշակերտը պետք է ցույց տար ձեռքի եւ ոտքի 108 դիրք նախքան միջանցքի վերջը հասնելը: Յուրաքանչյուր նոր մանեկեն պատկերում էր նոր հակառակորդ: Այն ժամանակ, երբ վանքի վրա հարձակվել են մանջուրները, վանքում կային դեռ մանեկեններ: Երբ վանքն այրվեց մանջուրների կողմից, մանեկենի տեղադրման եւ կառուցվածքի մասին գիտելիքները կորսվեցին:

Ավելի ուշ, երբ 2հինաստանի հարավային մասի բնակիչներն ապրում էին նավերի վրա,

ուսումնասիրում եւ զբաղվում էին վինգզուներով, փայտե մանեկենի փոխարեն օգտագործում էին նավակայանը: Անհրաժեշտության դեպքում այդ «իրանին» կացնում էին «ձեռքեր» եւ «ոտքեր»: Երբ վինգզուները ստա-



րածվել էր «գետնի վրա», արդեն սկսեցին օգտագործել այդ տիպի կառուցվածքով փայտե մանեկեն:

Ներկայում օգտագործում են մեկ մանեկեն եւ որպես ուսումնառության հիմք օգտագործում են 108 զանազան տեխնիկաներ:

Մանեկենը պատրաստելու համար շուրջ մեկ մետր խորությամբ փոս էին փորում: Փոսի մեջ տեղադրում էին շուրջ 2,5 մետր բարձրությամբ սյուն: Այդ անշարժ եւ պինդ, հողի մեջ խրված սյունը նման չէր ներկայում օգտագործվող մանեկեններին: Ժամանակակից մոդելն իրենից ներկայացնում է փայտե մարզական սարք, որն օգտագործվում է վինգզուների պարապմունքների ժամանակ տարբեր հարվածներ եւ մարտ վարելու տեխնիկա սովորելու համար: Այն իրենից ներկայացնում է զլանաձեւ փայտե սյուն՝ 152,5 սմ երկարությամբ ու 22,5 սմ տրամագծով: Մանեկենի բաղկացուցիչ մասերն են երկու «վերեւի ձեռքերը», որոնք գտնվում են «իրանի» վերեւի մասի երկու անցքերում, երրորդ ձեռքը կամ «միջին ձեռքը», որը տեղադրված է վերեւի երկու ձեռքերի տակ եւ մանեկենի «ոտքը», որը ծավալված է, ունի երեք ձեռքի հաստություն ու գտնվում է «միջին ձեռքի» տակ: Այս բոլոր տարրերը միասին կազմում են մա-

նեկենի «մարմինը», որն ամրացված է երկու հենակներից կազմված պատվանդանին: Դրա ընդհանուր անվանումն է «Սոկ յան ջոն», որը չինարեն նշանակում է փայտե մանեկեն: Գոյություն ունի նաեւ շարժվող մանեկեն:

Արցախի վինգզու-բուցֆուի ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ Սայաթ Բաղդասարյանի հետ ունեցած հարցազրույցը կհետաքրքրի մարտարվեստների հանդեպ ոչ անտարբեր մարդկանց, ինչպես նաեւ ավելի մոտիկից կծանոթացնի փայտե մարդու հետ, հատկապես, որ մանեկենի վրա մարզվելը մեկ տասնամյակից ավելի



ՇԵՏԱԳԻՑ

ՀԱՐՎԱՐԴՅԱՆ ԴԱՍԵՐ

Հարվարդի համալսարանի՝ իր ուսանողներին ուղղված մոտիվացիոն մամակից է երկար է, բայց շատ կարևոր:

- 1. Եթե հիմա քնես, իհարկե, երազումդ քո երազանքը կտեսնես, իսկ եթե քնի փոխարեն սովորես, ապա քո երազանքները իրագործված կտեսնես:
2. Երբ մտածում ես, որ արդեն շատ ուշ է, իրականում՝ ամեն ինչ դեռ նոր է սկսվում:
3. Սովորողի տանջանքները անցողիկ են, անգետի՞նը՝ հավերժ:
4. Սովորելը ժամանակի վատնում չէ, այլ տքնաջան աշխատանք:
5. Կյանքը միայն կրթվելը չէ, բայց եթե դու չես կարողանում անցնել այդ ճանապարհով, ուրեմն ոչ մի ճանապարհով էլ չես կարողանա անցնել:
6. Միայն նա, ով ամեն ինչ շուտ է անում,

ով ջանք է դնում, միայն նա էլ կկարողանա իրականում վայելել իր հաջողությունը:

- 7. Բոլորին չի հաջողվում ամեն ինչ հասցնել, բայց հաջողությունը գալիս է ինքնակատարելագործման և վճռակամության դեպքում:
8. Ժամանակը թռչում է:
9. Մարդիկ, որոնք ներդրում են ապագայի մեջ, ռեալիստներ են:
10. Այսօրը այլևս չի գալու:
11. Զքրտնեն՝ չես վաստակի:
12. ՀԵՆՑ ՀԻՍԱ ՔՈ ԹՇՆԱՄԻՆ ՍՈՎՈՐՈՒՄ Է:

Հ.Գ. Հատկապես վերջինը շատ կարևոր է: Պատերազմից հետո առավել քան երբևէ ապետը է անընդհատ հնչի մեր ու մեր աշակերտների ականջներում:

վիճաբան պարապած մարզչի սիրելի զբաղմունքն է:

- Սայաթ, ինչո՞ւմ եք տեսնում փայտե մանեկների գլխավոր առավելությունը պարապմունքներում օգտագործելու մեջ:

- Մանեկների վրա պարապելու նպատակը մարզիկի տեխնիկան մաքրելն ու կատարելագործելն է, իսկ զուգընկերոջ բացակայության դեպքում մանեկները կատարում է նաեւ զուգընկերոջ դեր: Դրա գլխավոր առավելությունը մարզիկի կողմից տիրապետվող տեխնիկայի կատարելագործումն ու մաքրումն է, ինչպես նաեւ շարժումների արագության զարգացումը:

- Հիշո՞ւմ եք Ձեր առաջին պարապմունքները փայտե մարդու հետ, ի՞նչ կարող եք պատմել դրա մասին:

- Իմ առաջին մարզումները մանեկների հետ բնականաբար սկսել են վիճաբան մարզածելով մարզվելու հետ միասին՝ 2006 թ.-ից սկսած: Ինձ համար մարտարվեստի ամենալավ եւ արդյունավետ մարզման ձեւն է, քանի որ այն կարող է լինել քո զուգընկերը մինչեւ խորը ծեղրություն: Մանեկներով պարապելիս ներսիցդ դուրս է գալիս բացասական էներգիան: Այն կարող է նաեւ լավ հոգեբան ու հոգեբույժ լինել:

- Ժամանակի ընթացքում փոխվե՞լ է արդյոք մանեկների կառուցվածքը, թե՞ նույնն է մնացել:

- Քունգ ֆուի մեջ մանեկները փոփոխության են ենթարկվել, ավելի ճիշտ՝ դրանց տեսակներն են շատացել, բայց վիճաբանի մեջ կարելի է ասել, որ մանեկները լուրջ փոփոխության չեն ենթարկվել:

- Ժամանակակից տեխնոլոգիաներն արդյո՞ք մեծ հնարավորություն չեն տալիս փայտե մանեկների արդիականացման համար:

- Այն, ինչը ավանդական է, հին է եւ ունի իր աշխատանքի կոնկրետ ձեւն ու նպատակը, ապա ժամանակակից տեխնոլոգիաները չեն կարող ոչ մի բան փոխել: Բայց մենք կարող ենք մեր գործը հեշտացնելու համար մանեկներ պատրաստել ժամանակակից գործիքներով: Փոփոխությունը ընդամենը պատրաստման գործիքների մեջ է, մնացածը փոխել պետք չէ:

- Փայտե մարդու հետ կատարվող ուսումնական վարժությունները համակարգված են բոլոր կարգերի համար, այսինքն՝ մարզիկի շարժումների համար կա՞ որևէ ծրագիր, որը տառնում է ավելի պարզից դեպի ավելի բարդ վարժություն:

- Այո, կոնկրետ վիճաբանի համար, հավանաբար նաեւ մյուս ոճերի համար նույնպես, մանեկների վրա աշխատանքները համակարգված են եւ բաղկացած են մի քանի մասերից: Երբ արդեն մարզիկը յուրացնում է պահանջվող տեխնիկան, հետագայում նա կարող է նաեւ ազատ ինքնաստեղծ վարժություններ կատարել փայտե մարդու հետ:

- Ինքներդ շարունակո՞ւմ եք մանեկների վրա պարբերաբար մարզվել:

- Շարունակում եմ: Ասեմ, որ դա իմ սիրած զբաղմունքն է:

- Մանեկների վրա աշխատելիս մտքերը ի՞նչ ուղղությամբ պետք է լինեն: Ավելի շատ ուղղվեն դեպի նե՞րս, թե՞ դուրս:

- Փայտե մանեկների վրա աշխատելիս մտքերը պետք է ուղղված լինեն դեպի կատարվող վարժությունները՝ փորձելով դրանք կատարել ավելի մաքուր, արագ եւ սահուն: Այսինքն՝ այդ պահերին մտքերը ուղղված են լինում դեպի դուրս: Իսկ երբ արդեն վարժվելուց հետո վարժությունները կատարվում են ավտոմատացված, դա հնարավորություն է տալիս մտքերը կենտրոնացնելու դեպի ներս:

- Վիճաբանի Մեծ Վարպետ Իպ Մանը, ըստ հայտնի արդյունքների, շատ ժամանակ էր հատկացնում փայտե մանեկներով պարապելուն եւ իր խնդրանքները մտցնում դրա կատարման տեխնիկայի մեջ: Իսկ մերօրյա Վարպետները ձեւափոխումներ անո՞ւմ են:

- Թոփ Մեծ վարպետների կազմում է նաեւ իմ ուսուցիչ, ՀՀ Վիճաբանի ֆեդերացիայի հիմնադիր նախագահ Մեծ Վարպետ Սուրեն Ավագյանը: Նա ստեղծեց աշխարհում գոյություն ունեցող Վիճաբանական եւ Չինական վիճաբանից բացի Հայկական վիճաբանը, որն ընդունվեց Աշխարհի վիճաբանական ուղղվածության վիճաբանի ֆեդերացիայի նախագահ Մեծ Վարպետ Խոսե Վին Չանգի կողմից: Մեծ Վարպետ Իպ Մանը որոշ ձեւափոխումներ մտցրեց մանեկների դասական վարժահամալիրի մեջ: Յուրաքանչյուր վարպետ, ինչպես ասում են, իր ձեռագիրն է մտցնում կատարման մեջ:

- Ձեր սեփական պարապմունքների ընթացքում եղե՞լ են պահեր, երբ թվացել է, թե հասել եք զագաթնակետին:

- Այդպիսի պահեր չեն եղել: Միշտ էլ ստանալու եւ սովորելու կարիք եմ ունեցել եւ հիմա էլ ունեմ: Կատարելության հասնելու ճանապարհին չկան զագաթնակետեր: Բայց հաճախակի են լինում պահեր, երբ տիրապետած տեխնիկայից եւ իմ կատարածից գոհ եմ լինում:

- Կա՞ն արդյոք բնորոշ որևէ ընդհանուր սխալներ, որոնք կատարում են աշակերտները մանեկներով աշխատելիս:

- Կան այդպիսի սխալներ, որոնք հիմնականում կատարում են աշակերտները: Հենց այդ սխալների վերացման եւ տեխնիկայի զարգացման համար էլ ստեղծվել է մանեկները:

- Կարո՞ղ է փայտե մանեկները օգտակար լինել նաեւ այլ մարտարվեստների ներկայացուցիչների համար:

- Այո, այլ մարտարվեստների ներկայացուցիչների մոտ ամենաքիչը կգարգանա թե՛ արագությունը, թե՛ ռեակցիան եւ թե՛ հակահարված հասցնելու ունակությունը, թեկուզեւ իրենց տեխնիկայի մեջ չկա մանեկների հետ աշխատանք:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՎԵՐԺ ԿԵՆՂԱՆԻ ՄԵՐ ՍԻՐՈ ՄԵՉ



երկրորդ մասնագիտությունը՝ տեղափոխվել է ԽՆժրիստանի միջնակարգ դպրոց և աշխատանքի անցել որպես դասվար:

Հավատարիմ կինը, երկու երեխաների երիտասարդ մայրիկը, իր սաների սիրելի դասվարը երկրային կյանքին հրաժեշտ տվեց 2021թ. դեկտեմբերի 31-ին: 40 օր կյանքի կռիվ տվեց, բայց չկարողացավ հաղթել դաժան հիվանդությանը... Անհավատալի է, անընդունելի, անըմբռնելի...

Կյանքով ու եռանդով լի, միշտ շարժման մեջ, միշտ նախաձեռնող Ջարինե Գրիգորյանի մահը որոտ էր անամպ երկնքում: Կյանքի 40-րդ գարունը բոլորած՝ այլևս լույսի ու հավերժի ճամփորդ է մեր սիրելի գործընկերուհի Ջարինե Գրիգորյանը: Նա ապրեց կարճ, բայց բովանդակալից կյանք, օժտված էր մարդկային դրական հատկանիշներով: Չափազանց բարի էր, համեստ, համբերատար ու ներդաճիտ, առաքինի: Նրա մահով խորապես վշտացել են թե՛ հարազատ-բարեկամները, թե՛ գործընկերները, թե՛ սաներն ու նրան ճանաչողները:

Հիմա՝ ցավի ու կորստի այս պահին նրա ընտանիքին ու բոլորիս համբերություն ենք կամենում, քանզի համակերպույնը դժվար է:

Սիրելի՛ Ջարինե, դու հեռացար անժամանակ, բայց ապրեցիր գեղեցիկ, պարկեշտ ու պատվախնդիր, ճիշտ ու օրինակելի: Հոգիդ լույսի մեջ մնա, սիրելի՛ ուսուցչուհի: Քեզ բացակա չենք դնում:

Մեծ վշտով և կսկիծով՝ ԽՆժրիստանի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՈՐ ԼՈՒՍԱՎՈՐ ՇԵՏԷ Է ԹՈՂԵԼ



քից՝ միշտ օրինակ է ծառայել շրջապատի համար:

Նա ամբողջ կյանքը ապրել և արարել է հայրենի Նորագյուղում, ամենացորդ նվիրվել կրթական գործին՝ հայրենիքին տալով կրթված և հայրենասեր սաներ:

Նրա ներսի մաքրամաքուր լույսը արտացոլված էր ժպտուն աչքերի և խոհեմ հայացքի մեջ:

Նրա մեջ ամեն ինչ չափածո-ձևած էր՝ խոսքի մեջ չափավոր, կոկիկ, իսկ ահա գործում նվիրյալ: Էլմիրան սիրով էր կատարում իր առաքելությունը: Որպես մտավորական ամբողջ կյանքում վայելել է շրջապատի սերն ու հարգանքը:

Ցավոք, ամժամանակ մահը ընդհատեց նրա կենսասեր կյանքը:

Ամիսներ առաջ էլմիրան դարձավ երկնային կյանքի բնակիչներից մեկը:

Բայց այստեղ՝ երկրի վրա, նա կատարել է իր կյանքի սխրանքը, այն բանով, որ նրա ցանած բարի սերները միմյանց հաջորդող սերունդներին կպարզեն չկոշտացող, չկարծրացող մտավոր հաց:

Ձեր պակասը կզգացվի, Սիրելի՛ էլմիրա:


Նորագյուղի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԿՈՐԵԼ Է

Կլադիմիր Ղարիբի Աղասարյանի՝ Ասկերանի շրջանի ԽՆժրիստանի միջնակարգ դպրոցի կողմից տրված 464085 համարի ատեստատը՝ տրված 2009 թվականին: Համարել անվավեր:

ՎԱՆԱՆ ՏԵՐՅԱՆ-137

ՀԱՅ ԲՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՇՈՂՈՂՈՒՄ ԱՄՏՐԸ



գրասեղանի դարակուս... Այդ մտաբայա թերթիկները, գրված չքնաղ, ազնվական գրերով, նուրբ ու մաքուր... օ՛, հեռու ընկեր իմ, օ՛, Վահան Տերյան»

«Մի գարնանակի քնքուշ ու խնդազգանունը եմ ունենում, երբ հիշում եմ, որ գրասեղանիս դարակուսը պահպանում էր Տերյանի իսկական ձեռագրերը... Կ ա թ ծ ե ս արեգակն է պահպանում իմ գրասեղանի դարակուսը... Այդ մտաբայա թերթիկները, գրված չքնաղ, ազնվական գրերով, նուրբ ու մաքուր... օ՛, հեռու ընկեր իմ, օ՛, Վահան Տերյան»

Եղիշե Չարենց

20-րդ դարի առաջին երկու տասնամյակները հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական տարիներն էին: Կոտորածներ, տեղահանություններ, մերկ ու սովալլուկ գաղթականների անվերջանալի շթղա: Հենց այդ տարիներին իրենց անմահ ստեղծագործությունները երկնեցին հայ գրականության այնպիսի լուսատուներ, ինչպիսիք են Թումանյանը, Իսահակյանը, Վարուժանը և ուրիշներ: Հենց դարակուսներն էլ հայ պոետիկայի երկնակամարում շողողաց մի աստղ, որի ստեղծագործությունները խոր համակրանք ու հիացմունք առաջացրին ընթերցատեր հասարակության շրջանում: Դա Վահան Տերյանն էր:

Վ. Տերյանի բանաստեղծությունների անդրահիվ ժողովածուն լույս տեսավ 1908թ. «Մթնշաղի անուրջներ» խորագրով. «Պահ մի մոռացվեցին մեր անվանի բանաստեղծները, ամենուրեք՝ երկնայիններում, ընտանիքներում արտասանվում էին Տերյանի տնեւտներն ու էլեգիաները: Սկսվել էր պարզապես տերյանական շրջան, Տերյանի էպիտա: Օղը լիքն էր Տերյանով...» (Ստ. Չոբանյան):

Գրքի առաջին ընթերցողներից էին Թումանյանն ու Իսահակյանը, որոնք էլ ի սրտե ողջունեցին պոետին՝ համարելով նրան մեծ տաղանդի տեր բանաստեղծ: «Ես ուրախությամբ ողջունում եմ Չեր մուտքը գրական ասպարեզ: Բարով եկաք», - գրել է Թումանյանը: «Կեցցեն, Վանիկ ջան, հրաշալի բաներ են, բյուրեղացած զգացմունքներ՝ անթերի ձևերի մեջ: Իսկական քնարերգությունը սա է...», - գրել է Ավ. Իսահակյանը: Իսկ երիտասարդ Տերյանը, որ այնքան փայլուն գիտեր ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականությունը, Իսահակյանին խոստովանել է. «Ձեզանից հետո կամ նոր, բոլորովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լռել»:

Ունենալով հանգիստ ու խոհուն բնավորություն, այնուհանդերձ, Տերյանն ասարթ է բուռն ու անհանգիստ կյանքով: Նետվելով մի կողմից գրական, մյուս կողմից՝ հասարակական-քաղաքական կյանքի լայն ասպարեզ՝ բանաստեղծը ողջակիզվում էր հայրենիքի ճակատագրով: Հայրենիք, որ հայտնվել էր խոշոր, ռազմատենչ պետությունների բաց երախների արանքում: Տերյանը այն բացառիկ բանաստեղծներից է, որին հաջողվել է ձեռք բերել փայլուն կրթություն ու բազմակողմանի կայուն գիտելիքներ: Նպատակադրված էր խորանալ արևելագիտության մեջ: Թիֆլիսի պետական գիմնազիա, Մոսկվայի Լազարյան ճեմարան, Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետ, Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետ: Այս բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանող լինելու տարիներին Տերյանը վերջնականապես հասունանում է թե՛ որպես բանաստեղծ և թե՛ որպես պետական, հասարակական գործիչ: Մեծ լեզվաբան և Մառը (որին աշակերտել է Տերյանը) իր հուշերում հիացմունքով է խոսել Տերյանի «Գիտական որո-

նումների նուրբ ըմբռնման», նրա հետազոտական տաղանդի մասին: Եվ նա չէր սխալվել: Տերյանը արտակարգ խորությամբ գիտեր ոչ միայն մայրենի լեզուն, այլև կատարելապես տիրապետում էր ռուսերենին, ֆրանսերենին, հունարենին, ուսումնասիրում էր լատիներեն, վրացերեն, արաբերեն, արևելյան այլ լեզուներ: Դժվար չէ նկատել, որ Տերյանի շատ ստեղծագործություններին հոգեհարազատ են աշնան գույները, մեզոն ու մշուշը, մթնշաղն ու մայրամուտը, անձրևի, թափվող տերևների շշուկն ու շրշուկը: Այդ տրամադրությունն է իշխում «Վշուն», «Շշուկ ու շրշուկ», «Տխրություն» և այլ բանաստեղծություններում: Սակայն Տերյանը հոգու խորքում փայփայում է նաև գեղեցիկ անուրջներ, երագուր լուսեղեն արեք, ապրում մոտավոր գարնան կարտի ջերմությամբ: Պատահական չէ, որ Տերյանը գրել է. «Թախծում եմ, ճիշտ է, բայց այնպե՛ս լուսավոր...»:

Վ. Տերյանը ստեղծագործել է շուրջ մեկուկես տասնամյակ: Գրել է ավելի քան չորս հարյուր բանաստեղծություն, որոնք տեղ են գտել նրա երկու՝ «Մթնշաղի անուրջներ» և «Բանաստեղծություններ» (1912թ.) ժողովածուներում: Արձակ էջերից հայտնի են «Հայ գրականության գալիք օրը» գեկուցումը, որը քննադատական բնույթ է կրում և բազմաթիվ թարգմանություններ ոչ միայն գրողների ստեղծագործությունների, այլ նաև պետական, քաղաքական գործիչների աշխատություններ: Տերյանը չէր պատկերացնում հայ ժողովրդին, հայկական գրականությունն ու մշակույթը առանց համաշխարհային գրականության ու մշակույթի, բայց պահպանելով մեր հոգու առանձնահատուկ գծերն ու գույները:

Նա իր ստեղծագործություններով միանգամից մտավ հայ պոետիկայի ոսկե շրջան, կանգնեց ամենից մեծերի կողքին, դարձավ բազմադարյան մեր բանաստեղծության նոր, համճարեղ ձայնակարը, մեր մշակույթի պղնձե զանգի նոր, արքայական լեզվակը, և նրանով էր, որ սկսվեց հայ գրականության գալիք օրը, մեր պոետիկայի նոր հազարամյակը:

Տերյանի քնարերգության հիմնական մոտիվներն են՝ սեր, հայրենիք, տառապանք, արևածագ: Տերյանի համար սերն ազատություն է, կյանքի դիմակներից մերկացած հոգիների մտերմություն, չձևանալու, չլեզոծելու, սեփական երկունը չթաքցնելու հազվագյուտ հնարավորություն, մեկ ուրիշին անսահմանորեն հավատալու, վստահելու անդիմարդելի պահանջ:

Միավ կլինեք ենթադրել, որ հայրենիքի ցավը Վ. Տերյանի մեջ սաստկացավ նրա կյանքի վերջին տարիներին, ինչպես կարծում էին շատերը: Սակայն դեռևս 1905թ. Ավ. Իսահակյանը Գանձայում (բանաստեղծի ծննդավայրում) հանդիպել է Տերյանին և գրառումներ կատարել բանաստեղծի մտածմունքների, մտահոգությունների մասին: Սիս թե ինչ էր ասում Տերյանը.

«Նայիր, ա՛խ, ի՛նչ տխուր աչքեր ունեն մեր գյուղացիները, ի՛նչ մտահոգ դեմքեր՝ արևով, անձրևով այրված ու բովված: Ի՛նչ դառն աղբաություն է կաթում վրաներից, բայց ուրախանում են: Բայց ի՛նչ թախծոտ ուրախություն է այս: Իբրև թե ուրախ երգեր են երգում, բայց ինչքա՛ն վիշտ ու մորմոք կա նրանց երգերի մեջ: Դարերի տառապանքն է խոսում սրանց բերանով... Շատ են սիրում իմ բարձրագույն հայրենիքը և նրա խնայի ժողովրդին, որ աշխատում է ու երգում, տքնում ու երգում...»:

Հետևյալ տողերը հենց վերը նշածի խտացումն են.

Մի ամենո ցավ կա երկրում
այս տխուր,
Մի տխուր, հոգեմաշ
հուսահատություն...

Հայրենիքը միշտ Տերյանի երջան մեջ էր: Այդ երակը, սկիզբ առնելով «Մթնշաղի անուրջներ»-ից, հոսել է նրա հետագա շարքերի միջով: Օրերի, տարիների հետ հայրենիքի սերն ավելի է հասունանում, երկրի ճակատագիրը դառնում է իր իսկ ճակատագիրը, բարձրանում է հայրենիքի բախտի նկատմամբ անձնական պատասխանատվությունը: Այդ բոլորն իրենց արժարժում են գտել «Երկիր Նաիրի» շարքում: Միրո, հպարտության, ցավի ու հույսի նվազներից է հյուսված «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքը: Այդ նվազներից սկիզբ առնում էր Տերյանյան Ռուսաստանում: 1915թ. ողբերգական ժամանակներում:

Դեռևս 1913թ. Տերյանը մորմոքում էր. «Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի»: Նրան մի պահ թվաց, թե «Մյուսական Հայաստանը» կործանվում է, և միրիկից պետք է արթնացնել «հոգևոր Հայաստանը»՝ մեր պատմությունը, բարոյականությունը, մեր հողի քաղցրությունը, մեր արժանապատվությունը, մեր անմար ոգին: Վերջապես և մահվան սարսուռներ երգող բանաստեղծը հավատաց իր ժողովրդի հարության հրաշքին: Նա գիտեր ժողովրդի պատմությունը, որ շողում էր ոգու թռիչքներով, բարոյական իղեպների անթեք հավատարմությամբ: «Երկիր Նաիրի»-ն Տերյանի համար հայ ոգու խորհրդանիշ էր, արմաքան ժողովրդին ուղղված մարտակոչ էր: Դա Արմույանի ճիշտ էր՝ «Էդ ո՛ն վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չէ՛ք ճանաչում...», դա Թումանյանի հառաչանքն էր՝ «Հույսի հայրենիք, լույսի հայրենիք...»:

Վերջապես և իրիկանաժու երգող բանաստեղծին բնութագրող մի խորհրդանիշն էլ արևածագն է, և սխալված չենք լինի, որ ասենք՝ նա ամենից առաջ արևածագի բանաստեղծ է: «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան, (Արևածագ, օ՛, արշալույս-արյունոտ...):»:

Այդ, արյունոտ եղավ հայ ժողովրդի նոր ժամանակների այգաբացը, և մեր արշալույսի երկնքի կարմիրը մեր արյունն էր, ժողովրդի թափած արյունը: Ու այդ արյունոտ արևածագից էլ սկսած՝ Տերյանն իր ժողովրդի ազատության կռիվն էր մղում, և ազատության համար մարտնչող ամեն մի զինվոր իր եղբայրն էր, իր բախտակիցը: Եվ նա մարտակոչ է հղում իր ժողովրդին.

- Շողա՛, վրեժի մահաբեր դաշույն,
- Հնչի՛ր, փոթորիկ ժողովրդական:
Եվ այս սուրբ կռվի մեջ՝

Դավաճան է՛նա, ով լռում է դեռ,
Սատմիչ է՛, ով իր սուրբ չի հանում...

Վ. Տերյանը շատ բան արեց՝ ընդարձակելու մեր հայրենիքի հոգևոր սահմանները: Նա եղավ Մ. Գորկու, Վ. Բրյուսովի ամենաեռանդուն գործակիցը՝ հայ պոետիկայի և արձակի նշանավոր ժողովածուները լույս ընծայելու օրերին: Նա երազում էր ու վախճանում, որ կգա ժամանակ, և կտեսնենք, որ «մեր գրականությունը թարգմանվում է ոչ թե բարեգործական նպատակով, այլ միայն նրա համար, որ նրա մեջ հայտնվել են այնպիսի արժեքավոր գործեր, որ կարող են սնել նաև օտարներին...»: Նա մույնպես, ինչպես մեր մյուս մեծերը, պատգամում էր չներփակվել սեփական պատյանի խաբուսիկ ջերմոցում, բաց լինել աշխարհի դեմ, շառլոտեն տալ ու առնել:

Վ. Տերյանը, լինելով խորապես ազգային բանաստեղծ, մեր գրականությունը կարողացավ խոսեցնել հայրենի մեկ ուրիշ որակներով, պատկերային անմահաղեպ մտածողությամբ, նոր արյուն մերարկեց մեր տաղաչափության երակների մեջ: Նրա բանաստեղծությունները ռիթմիկ են, օժտված են մեղեդայնությամբ, հանգվածապես սեփական հոյակապ: Նա ստեղծել է բաղաձայն (բաղաձայնային) և ձայնավոր (առձայնային) հնչյունների կուտակումների փայլուն օրինակներ, որոնք հնչական լավ հնարավորություններ են տալիս ոտանավորին: Տերյանը մեր քնարերգության մեջ անկրկնելի էր որպես բանաստեղծության ենթաստեղծների՝ սոնետ, տրիոլետ, զագել կիրառող, որոնք առավել տարածված էին եվրոպական, իսկ զագելը՝ արևելյան (արաբական) պոետիկայում: Արժե նշել մի փաստ ևս. նրա շուրջ 300 տրիոլետներից մոտ 10-ը նվիրված են Նվարդին (մեր դիցաբանության հերոսուհուն): «Արա Գեղեցիկ և Շամիրան»): «Ձեմ դավաճանի իմ Նուարդին», «Արտիս հուշերը բարի են դեռ», «Պիտի մնա միշտ ժպտուն ու վառ» և այլն: Տերյանը թողել է գա-

գելների հիանալի շարք. «Հրաժեշտի գագել», «Գագել Ստ. Շահումյանին», «Ի՛նչ մնաց ինձ ուսկա մի ցանց, ուրիշ ոչինչ»: Թե՛ հայրենասիրության, թե՛ մաքառումներով անցած մեր պատմական ուղում մեր բազմադարյան մշակույթի պատկերման մի ինքնատիպ մերթող է «Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին» զագելը»: Բանաստեղծը համոզված է, որ անկախ բարբարոս ցեղերի մշտական հարձակումներից, մեր երկիրը վատահորեն կգնա դեպի ապագա, դեպի հավերժություն:

Բարբարոսներ շատ կգան ու կանցնեն անհետ,

Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:

Տերյանի գրական երջան մի երակն էլ թարգմանությունն է: Նա թարգմանել է Ռուսթավելու, Բրյուսովի, Օսկար Ուալդի, Արթուր Գինցերի և եվրոպական ու ռուս այլ գրողների ստեղծագործություններ: Ավելի ուշ ձեռնարկել է Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի թարգմանությունը, ռուսերեն է թարգմանել «Պեպո»-ն, ինչպես նաև շատ քաղաքական գրքեր (Լենինի և ուրիշների): Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները խոցոտում էին ոչ միայն նրա հոգեկան աշխարհը, այլև մահվան ուրվականի մագիլներում գտնվող մարմինը: Թողած մարգարտաշար իր երգերը՝ նա գրեց «Թուրքախառնության մասին դեկրետ», որ նոր Ռուսաստանի անունից (ստորագրված Լենինի կողմից) անվերապահ ճանաչում էր արևմտահայության իրավունքը՝ ապրելու իր սեփական հողի վրա: Տերյանը տաղանդավոր բանաստեղծի իր ձայնը բարձրացրեց հայ գաղթականների օգնելու ահազանգով ու արեց անհնարինը՝ նրանց բախտը փոքր-ինչ մեղմելու համար: Նա գնաց Հյուսիսային Կովկասի քաղաքները՝ մանկատներ ստեղծելու հայ որբերի համար: Նա ժամանակ էր գտնում՝ ծառայելու օգնության որբ երեխաների հետ, նրանց մեջ էլ նկատում է երկամբ Քոչարին ու նրան գործուղում Մոսկվա՝ ազատ արվեստների պետական արվեստանոց: Նախապատրաստում էր Լազարյան ճեմարանի ռեֆորմը և ծրագրում էր նոր կարգեր պատրաստել ապագա Հայաստանի համար: Երևան կատարած իր միակ այցելության օրերին այցելում է Վասպուրականից գաղթած երեխաների որբանոց, նրանց շարադրություն հանձնարարում իրենց ապրած ողբերգության մասին: Այդ թղթերը եղել են բանաստեղծի արխիվում: Նա մտածում էր գրել պոետ Վանի հերոսական պաշտպանության մասին: Աշխատելով Ազգությունների գործերի կոմիսարիատում՝ նա ամեն ինչ անում էր՝ օգնելու թուրքական յաթաղանից փրկված և Ռուսաստան հասած հայ գաղթականներին, հետևողական պայքար էր մղում նրանց դեմ, ովքեր հեռատես աչքով չէին նայում ազգային հարցին: Հենց այդ գործերով էլ գործուղվում է Միջին Ասիա, բայց հեռավոր Օրենբուրգ քաղաքում, հեռու հարազատներից, մտերիներից, հայրենի տնից, վախճանվում՝ հայրենիքի ցավը անբարձր հոգում:

Նա եղավ փնտրված բանաստեղծը բոլոր սերունդների համար, նրա բանաստեղծական կենարար աղբյուրից ընկել են մեր շատ ու շատ բանաստեղծներ: Չարենցի վրա մեծ հետք է թողել. «Չլինեք Տերյանը, ես ես չեի լինի...»:

Տերյանը միշտ մեզ հետ է ու կլինի գալիք բոլոր արշալույսներին, որպեսզի լուսաթրիռն ու լուսակորով ազդարարի.

Մեծության խավար գնդանից կրկին
ես վերադարձա հողի ու հայրտը,
Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ
Ու նոր խնդրությամբ այրեց իմ հոգին...

Այո՛, նա միշտ մեզ հետ կլինի, որ լսի հաղթական մարտի ցնծությունը, տեսնի շարքերը մեր հզորագոր, որ, եթե հանկարծ հոգնած լինենք կամ քնած՝ թշնամուց խաբված, արևածագի ցնծությամբ արթած՝ կանչի մեզ, ճշա՛՝ եղբայրներ, ելեք...:

Լեւոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ. ԵՄԻՇՅԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ՝ «ԼՈՒՍԱՐԱՐ» ՓԲԸ
Ստեփանակերտ, 3. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcstert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ զրազրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 19.02.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: